

**ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈՐՉԱՐԱՐԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (ԳՂՉ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)  
Հախվերդյան Ն. Ս.**

Հոդվածի նպատակն է բացահայտել Գորիսի պետական համալսարանի «Պատմություն» և «Տարրական մանկավարժություն» մասնագիտությամբ սովորող ուսանողների մտածողության տարբեր տեսակները, դրանց համադրությունը, մտավոր գործունեության ոճին բնորոշ անհատականն ու տիպականը, ինչպես նաև այն պայմանները, որոնք կազմում են մտավոր արդյունավետության հիմքը:

Հոդվածի խնդիրներն են պարզաբանել մտածողության տեսակների առանձնահատկությունները և բացահայտել տարբեր մասնագիտություններ ընտրած ուսանողների մտածողության տեսակների առկա դրսևորումները:

Հետազոտության իրականացման համար կիրառել ենք Գ. Ռեզապկինայի մտածողության տեսակների որոշման մեթոդիկան, որտեղ հստակ հարցերի միջոցով կարելի է որոշել հետազոտվողների մտածողության տարբեր տեսակները՝ առարկայական-գործնական, վերացական-խորհրդանշական, բառատրամաբանական, ակնառու-պատկերավոր և ստեղծարարական:

Փորձարարական հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ մտածողության տեսակների դրսևորումներն ուղղակիորեն կախված են ուսանողների ձեռք բերած գիտելիքների կիրառման եղանակից, գործնական հմտություններից, կարողություններից: Տվյալ դեպքում ոչ թե վերացական մտածողությունն է հանգեցնում կոնկրետ արդյունքների, որքան առարկայական գործողությունը: Մտածողության տեսակների բարձր կամ ցածր արտահայտվածությունը կապվում է ինչպես տվյալ մասնագիտության, այնպես էլ ուսանողի անձնային և անհատական առանձնահատկությունների հետ:

**Բանալի բառեր.** առարկայական-գործնական մտածողություն, վերացական-խորհրդանշական մտածողություն, բառատրամաբանական մտածողություն, ակնառու-պատկերավոր մտածողություն, ստեղծարարական մտածողություն:

**Նախաբան:** Մասնագիտական գրականության վերլուծության միջոցով պարզել ենք, որ մտածողության տեսակները դիտարկվում են վերլուծական տարբեր հիմքերով՝ տեղեկատվության կուտակման, պահպանման և հաղորդման եղանակի, մտավոր ընդունակության բաղադրիչի, մտածողության տեսակների, ոճերի, անձնային տիպերի, հատկությունների և մասնագիտական գործունեության կապերի տեսանկյունով:

Ուսումնասիրման նպատակն է բացահայտել տարբեր մասնագիտություններով սովորող 1-4-րդ կուրսերի ուսանողների մտածողության տեսակների դրսևորումները: Հոդվածի արդիականությունը հիմնավորվում է մտածողության տեսակների առանձնահատկությունների բացահայտմանը միտված հետազոտական խնդիրների առաջադրման և դրանց լուծման առաջնահերթության գիտակցման իրողություններով: Նորույթը այն է, որ մանկավարժական մասնագիտություններ ընտրած ուսանողների մտածողության տեսակների առանձնահատկություններն ունեն ինքնատիպ դրսևորումներ՝ կախված ոչ միայն մտածողության ոճից, անձնային գծերից, այլև մասնագիտական մտածողության ձևից:

Մտածողության ուսումնասիրությունը հոգեբանության առանցքային հիմնահարցերից է, որը բոլոր ժամանակներում առաջնահերթ ծառայել է կրթական խնդիրների լուծմանը: Կրթության հոգեբանության հիմքն են կազմում մտածողության այնպիսի մասնավոր հարցեր, ինչպիսիք են՝ ինտելեկտի չափումը որպես ուսումնական ձեռքբերումների գնահատման չափորոշիչ (Հ. Այզենկ, Ա. Բինե, Ռ. Քեթթել և ուրիշներ) [1, 111-131, 2, 423-427, 8, 476-506], ուսուցումը որպես մտավոր զարգացման միջոց (Լ. Վիգոտսկի, Դ. Էլկոնին և ուրիշներ) [3, 95-128, 7, 301-305], մտավոր գործողությունների՝ ըստ փուլերի ձևավորումը որպես ուսուցման եղանակ (Պ. Գալպերին և ուրիշներ) [4, 31-38], տեսական մտածողության ձևավորումը որպես ուսուցման վերջնարդյունք (Դ. Էլկոնին և ուրիշներ) [7, 301-305], մտածողության հետազոտությունը որպես ուսումնական գործունեության մաս (Ա. Լեոնտև և ուրիշներ) [5, 201-218] և այլն:

Ներկայումս կրթական գործընթացներում անձնակենտրոն սկզբունքի համակողմանի կիրառությունն արդիական է դարձնում մտածողության անհատական առանձնահատկությունների հետազոտությունը, որի մասն են կազմում մտածողության տեսակները:

Ստորև կանգ առնենք մտածողության մի քանի տեսակների նկարագրման վրա: Ըստ Գ. Ռեզապկինայի՝ մտածողության տեսակները հետևյալն են՝ առարկայական-գործնական, վերացական-խորհրդանշական, բառատրամաբանական, ակնառու-պատկերավոր և ստեղծարարական: **Առարկայական-գործնական** մտածողության այս տեսակը բնորոշ է աշխատանքում, ուսման մեջ կամ առօրյա կենցաղային հարցերով զբաղված մարդուն: Պատկերացումների աշխարհը վեր է ածվում իրական աշխարհի՝ շնորհիվ մարդու առարկայական-գործնական մտածողության տեսակի: Ամենափայլուն գաղափարները ևս կարող են իրականության վերածվել մտածողության այս տեսակի շնորհիվ: **Վերացական-խորհրդանշական** մտածողության այս տեսակն ունեցող անձինք տեղեկատվությունը ստանում, ընկալում, մշակում, պահպանում ու վերարտադրում են մաթեմատիկական բանաձևերի օգնությամբ, որը ոչ մի ձևով հնարավոր չէ պատկերացնել: Վերացական-խորհրդանշական մտածողության շնորհիվ գիտության բնագավառում կատարվել են բազմաթիվ հայտնագործություններ: **Բառատրամաբանական** մտածողության տեսակը տարբերվում է վառ արտահայտված բառային ինտելեկտով: Այն իր մեջ ընդգրկում է ոչ միայն տրամաբանական մտածողության ունակություն, այլև սեփական լեզվի ու խոսքի լավ իմացություն: Բառատրամաբանական մտածողության շնորհիվ մարդը կարողանում է բացահայտել երևույթների պատճառահետևանքային կապերը և համապատասխան դատողություններ կատարել: **Ակնառու-պատկերավոր** մտածողությունն իրագործվում է մտապատկերների հետ կատարվող գործողությունների միջոցով: Մտապատկերների բովանդակության հետ վերլուծական գործողությունները սահմանափակված չեն իրավիճակային կապերի զարգացմամբ, այլ ուղղված են ընդհանուր և կայուն հարաբերությունների ավելի խորը, թաքնված էական հատկությունների հայտնաբերմանը, որոնք ակնառու վիճակում ուղղակիորեն չեն ներկայացվում: **Ստեղծարարական** մտածողության օգնությամբ ստացվում են միանգամայն նոր արդյունքներ: Ստեղծարարությունը ստեղծագործաբար մտածելու ընդունակությունն է՝ ոչ ստանդարտ խնդիրների լուծումներ գտնելը [8]:

Մտածողության տեսակների դրսևորումներն ըստ մասնագիտությունների

Կուրս	ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՄԱԿՆԵՐԸ				
	Առարկայական-գործնական	Վերացական-խորհրդանշական	Բառատրամաբանական	Ակնառու-պատկերավոր	Ստեղծարարական
Պատմություն 4-րդ կուրս	Միջին 4 Բարձր 6 Բարձր 7 Միջին 3	Ցածր 0 Միջին 4 Բարձր 7 Բարձր 6	Բարձր 7 Բարձր 7 Բարձր 7 Բարձր 8	Բարձր 6 Բարձր 8 Բարձր 8 Բարձր 7	Միջին 5 Բարձր 7 Բարձր 6 Բարձր 6
<b>Միջին. արդյունք</b>	<b>5</b>	<b>4,25</b>	<b>7,25</b>	<b>7,25</b>	<b>6</b>
Պատմություն 3-րդ կուրս	Միջին 5 Միջին 5 Միջին 3 Բարձր 6	Միջին 3 Միջին 3 Միջին 4 Միջին 4	Բարձր 6 Միջին 4 Բարձր 7 Բարձր 6	Բարձր 8 Բարձր 6 Բարձր 8 Բարձր 6	Միջին 5 Բարձր 6 Միջին 4 Բարձր 8
<b>Միջին. արդյունք</b>	<b>4,75</b>	<b>3,5</b>	<b>5,75</b>	<b>7</b>	<b>5,75</b>
Պատմություն 2-րդ կուրս	Բարձր 7 Միջին 5 Միջին 5 Միջին 4	Միջին 3 Միջին 3 Միջին 3 Միջին 4	Միջին 4 Միջին 4 Բարձր 6 Միջին 5	Բարձր 6 Բարձր 6 Բարձր 7 Բարձր 7	Բարձր 6 Միջին 5 Բարձր 6 Միջին 3
<b>Միջին. արդյունք</b>	<b>5,25</b>	<b>3,25</b>	<b>4,75</b>	<b>6,5</b>	<b>5</b>
Պատմություն 1-ին կուրս	Միջին 5 Բարձր 7 Միջին 4 Բարձր 6	Միջին 5 Ցածր 2 Ցածր 1 Միջին 5	Բարձր 7 Բարձր 7 Միջին 3 Բարձր 6	Բարձր 7 Բարձր 6 Բարձր 6 Բարձր 6	Միջին 5 Միջին 5 Բարձր 7 Միջին 4
<b>Միջին. արդյունք</b>	<b>5,5</b>	<b>3,25</b>	<b>5,75</b>	<b>6,25</b>	<b>5,25</b>
Տարր. մանկ. 4-րդ կուրս	Բարձր 6 Բարձր 8 Բարձր 7 Բարձր 6	Միջին 5 Միջին 5 Միջին 3 Միջին 4	Միջին 5 Միջին 6 Բարձր 7 Միջին 3	Բարձր 6 Բարձր 7 Միջին 5 Միջին 5	Բարձր 7 Միջին 5 Միջին 4 Բարձր 7
<b>Միջին. արդյունք</b>	<b>6,75</b>	<b>4,25</b>	<b>5,25</b>	<b>5,75</b>	<b>5,75</b>
Տարր. մանկ. 3-րդ կուրս	Բարձր 6 Բարձր 6 Բարձր 7 Բարձր 7	Միջին 4 Բարձր 6 Բարձր 7 Ցածր 2	Բարձր 8 Բարձր 6 Միջին 5 Միջին 3	Միջին 4 Միջին 4 Բարձր 7 Բարձր 6	Բարձր 6 Բարձր 6 Բարձր 6 Միջին 4
<b>Միջին. արդյունք</b>	<b>6,5</b>	<b>4,75</b>	<b>5,5</b>	<b>5,25</b>	<b>5,5</b>
Տարր. մանկ. 2-րդ կուրս	Բարձր 6 Բարձր 6 Բարձր 7 Բարձր 8	Միջին 3 Միջին 3 Ցածր 2 Միջին 3	Բարձր 7 Միջին 5 Միջին 5 Միջին 5	Միջին 5 Միջին 3 Միջին 5 Միջին 4	Բարձր 7 Բարձր 6 Միջին 4 Միջին 5
<b>Միջին. արդյունք</b>	<b>6,75</b>	<b>2,75</b>	<b>5,5</b>	<b>4,25</b>	<b>5,5</b>
Տարր. մանկ. 1-ին կուրս	Բարձր 7 Բարձր 6 Բարձր 6 Բարձր 7	Բարձր 6 Բարձր 6 Բարձր 6 Ցածր 1	Բարձր 6 Միջին 5 Միջին 4 Բարձր 7	Բարձր 6 Միջին 3 Ցածր 2 Բարձր 7	Միջին 5 Միջին 3 Միջին 3 Բարձր 8
<b>Միջին. արդյունք</b>	<b>6,5</b>	<b>4,75</b>	<b>5,5</b>	<b>4,5</b>	<b>4,75</b>

Մտածողության տեսակների փորձարարական ուսումնասիրությունը կատարվել է ԳՊՀ-ի «Պատմություն» և «Տարրական մանկավարժություն» մասնագիտությունների գծով՝ 1-4-րդ կուրսերում սովորող 32 ուսանողի հետ:

Ուսումնասիրության նպատակն է բացահայտել տարբեր մասնագիտություններով սովորող 1-4-րդ կուրսերի ուսանողների մտածողության տեսակների առանձնահատուկ դրսևորումները, որի համար կիրառել ենք Գ. Ռեզապկինայի մեթոդիկան [8]:

**Եզրահանգում:** Ուսումնասիրված ակադեմիական խմբերի մտածողության տեսակների միջինացված տվյալները ցույց են տալիս, որ կան էական տարբերություններ՝ մասնագիտության առանձնահատկություններից կախված: Օր.՝ «Մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության ցածր կուրսերում գործնական պարապմունքներն ավելի շատ են, քան տեսական դասաժամերը: Այսուհանդերձ, մտածողության տեսակների դրսևորումներն ուղղակիորեն կախված են ձեռք բերած գիտելիքների կիրառման եղանակից, ուսանողների պրակտիկ կարողություններից, չափումների, ձեռքի աշխատանքի գործունեությունից, քանի որ այդ աշխատանքներում ուսանողները միշտ գործ են ունենում նմանությունների, տարբերությունների հետ (կերպարվեստ, տեխնոլոգիա): Տվյալ դեպքում ոչ այնքան վերացական մտածողությունն է հանգեցնում կոնկրետ արդյունքների, որքան առարկայական գործողությունները: Մտածողության տեսակների բարձր, միջին կամ ցածր արտահայտվածությունը կապվում է ինչպես տվյալ մասնագիտության առանձնահատկությունների, այնպես էլ տվյալ ուսանողի անձնային և անհատական առանձնահատկությունների հետ:

Կատարված հետազոտության ընդհանուր վերլուծությունն ըստ մասնագիտությունների ցույց է տալիս, որ «Մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ սովորող ուսանողների մոտ ամենաբարձր միջինացված ցուցանիշը 6,75 է, ինչը համապատասխանում է առարկայական-գործնական մտածողության տեսակին: Նույն մասնագիտության ամենացածր ցուցանիշը 4,25 է, որը համապատասխանում է վերացական-խորհրդանշական մտածողության տեսակին: «Պատմություն» մասնագիտությամբ սովորող ուսանողների մոտ ամենաբարձր միջինացված ցուցանիշը 7,25 է, որը համապատասխանում է ակնառու-պատկերավոր և բառատրամաբանական մտածողության տեսակներին: Նույն մասնագիտության ամենացածր միջինացված ցուցանիշը 2,75 է, որը համապատասխանում է

վերացական-խորհրդանշական մտածողության տեսակին: Ստացվում է, որ երկու մասնագիտությունների կտրվածքով թույլ է արտահայտված վերացական-խորհրդանշական մտածողության տեսակը, ինչն էլ բացատրվում է մասնագիտության առանձնահատկություններով: Դասավանդվող տեսական և գործնական առարկաների հարաբերակցությունը որոշակիորեն ազդում է մտածողության տեսակների կոնկրետ դրսևորումների վրա:

## **ЭКСПЕРИМЕНТАЛЬНОЕ ИЗУЧЕНИЕ ВИДОВ МЫШЛЕНИЯ (НА ПРИМЕРЕ СТУДЕНТОВ ГГУ)**

**Ахвердян Н. С.**

В статье поставлена цель - выявить у студентов, обучающихся по специальностям «История» и «Начальное образование», разные типы мышления (индивидуальные и типичные) их сочетание, характерное стилю умственной деятельности, а также те условия, которые составляют основу эффективности умственной деятельности. Представления о различных типах мышления обычно связываются с теми особенностями мышления, которые проявляются у субъектов при конкретной деятельности.

Задача статьи - выяснить особенности видов мышления и раскрыть имеющиеся проявления этих видов у студентов, выбравших разные специальности.

При проведении исследований мы применили методику Г. Резапкиной по определению видов мышления, где посредством конкретных вопросов можно определить разные виды мышления исследуемых: предметно-практический, абстрактно-символический, словесно-логический, наглядно-образный и креативный.

В результате экспериментального исследования пришли к заключению, что проявления видов мышления напрямую зависят от способов применения студентами знаний, умений и навыков.

В данном случае к конкретным результатам приводит не абстрактное мышление, а предметное действие. Степень выраженности видов мышления связана как с особенностью данной специальности, так и с личностными и индивидуальными особенностями студента.

**Ключевые слова:** предметно-практическое мышление, абстрактно-символическое мышление, словесно-логическое мышление, наглядно-образное мышление, креативное мышление.

**EXPERIMENTAL STUDY ON TYPES OF THINKING  
(FOLLOWING THE EXAMPLE OF GSU STUDENTS)**

**Hakhverdyan N. S.**

The aim of the article is to identify different types of thinking of students studying "History" and "Elementary Pedagogy" at Goris State University, their combination, individual and typical of the style of mental activity, as well as the conditions that form the basis of mental efficiency. Concepts about different types of thinking are usually related to the characteristics of thinking that are manifested in subjects when performing specific activities.

The objectives of the article are to clarify the specifics of the types of thinking and to identify the current manifestations of the types of thinking of students who have chosen different professions.

To conduct the research, we used the method of determining the types of thinking by G. Rezapkina, where through clear questions one can determine the different types of thinking of the subjects: subject-practical, abstract-symbolic, lexical, visual-visual and creative.

As a result of experimental research, we have come to the conclusion that the manifestations of the types of thinking directly depend on the method of applying the knowledge acquired by students, practical skills, abilities. In this case, it is not abstract thinking that leads to concrete results, but subject action. The high or low expression of the types of thinking is related to the characteristics of the given profession, as well as the personal and individual characteristics of the student.

**Keywords:** subjective-practical thinking, abstract-symbolic thinking, lexical thinking, obvious-pictorial thinking, creative thinking.

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Айзенк Г. Ю. Интеллект: новый взгляд // Вопросы психологии. 1995. № 1. С. 111-131.
2. Бине А. Измерение умственных способностей: Пер. с фр. / Издание подгот. Вал. А. Луков, Вл. А. Луков. СПб.: Союз, 1998. 432 с.
3. Выготский Л. С. Мышление и речь. 5-е изд. М.:Лабиринт.1999. 351 с.

4. Гальперин П., Данилов В. Воспитание систематического мышления в процессе решения малых творческих задач // Вопросы психологии. 1998. № 1. С. 31-38.
5. Леонтьев А. Н. Деятельность. Сознание. Личность. М.: Смысл; Изд. центр "Академия". 2004. 352 с.
6. Методика «Тип мышления» (методика в модификации Г. Резапкиной) <http://metodkabi.net.ru/index.php?id=32http> (06.09.2021)
7. Эльконин Д. Б. Детская психология: учеб. пособие для студ. высш. учеб. заведений / 4-е изд., стер. М.: Издательский центр «Академия», 2007. 384 с.
8. Cattell R. B. The description of personality: Basic traits resolved into clusters. // Journal of Abnormal and Social Psychology. 1943. 38. P. 476-506.

**Տեղեկություններ հեղինակի մասին**

*Հախվերդյան Ն. Մ. – հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

*Գորիսի պետական համալսարան*

*Էլ. փոստ՝ [nazelihaxverdyan@mail.ru](mailto:nazelihaxverdyan@mail.ru)*

*Տրվել է խմբագրություն՝ 09.09.2021*

*Գրախուսվել է՝ 12.11.2021*